ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ և ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հետաքրքրության ներկայացման Հայտ
(Խորհրդատվական Ծառայություններ– Ընկերությունների Ընտրություն)

հուլիսի 26, 2016թ.
Հայաստան

Առաջադրանքի անվանումը՝ Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության հիմնադրամի վեբ կայքի պատրաստում

Հղումը No.: R2E2 -02/2016

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը այժմ հրավիրում է խորհրդատվական ընկերություններին (խորհրդատուներ) ներկայացնելու իրենց հետաքրքրությունը ծառայությունների մատուցման համար: Խորհրդատվական ծառայությունները (“Ծառայություններ”) ներառում են՝ **Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության հիմնադրամի վեբ կայքի ձևավորում և պատրաստում:**

Աշխատանքների շրջանակը
Վեբ կայքը պետք է ունենա՝

Ֆունկցիոնալ նշանակություն

- Բոլոր ենթաբաժինները պետք է ունենան նմանատիպ կառուցվածք
- Կայքը պետք է ունենա խմբագրման հնարավորություն, որը պաշտպանված կլինի գաղտնաբառերով:
- Կայքը պետք է գրված լինի 3 լեզուների համար:

Կայքի ընդհանուր էլեմենտներ

- Կայքի ձևաչափը պետք է հասանելի լինի համակարգչով, պլանշետով, բջջային հեռախոսով և նոթբուկով:
- Կայքի բոլոր էջերում պետք է տեղադրված լինի կայքի գլխավոր մենյուն, լեզվի և երկրի ընտրության կոճակներ, սոցիալական ցանցերի էջերի հղումներ (facebook, twitter), Google analitic-ի արդյունքները:
- Կայքի ստեղծված լեզուն պետք է հնարավորություն ունենա թարմեցվելու ըստ շուկայում դուրս եկած տարբերակի:

- Կայքը պետք է հնարավորություն ունենա ներբեռնելու տարբեր ֆորմատ ունեցող փաստաթղթեր (doc, docx, exl, pdf, ppt, և այլ):
- Կայքը պետք է հնարավորություն ունենա ներբեռնելու նկարներ, վիդիեոներ, աուդիո ֆայլեր:
- Կայքը պետք է հնարավորություն ունենա հետագայում անհրաժեշտության դեպքում փոփոխելու առկա կառուցվածքը՝ (ավելացնել, պակասեցնել, տեղափոխել մենյուները և ենթամենուները):
- Կայքը բոլոր էջերում պետք է ունենա որոնման համար նախատեսված պատուհան
- Կայքի ձևավորումը պետք է համապատասխանի ՀՎԷԷ Հիմնադրամի ձևավորման և կոմունիկացիոն կանոններին, որոնք տրամադրվել են Պատվիրատուի կողմից
- Կայքում գրանցված այցելուների համար թարմացվող նորությունները ստանալու հնարավորություն էլեկտրոնային փոստին:
- Կայքը պետք է աշխատի բոլոր բրաուզերներով:

Խորհրդատվական ծառայությունների տևողությունը՝ 25-30 օր:

Հետաքրքրված խորհրդատուները պետք է տեղեկություններ տրամադրեն այն մասին, որ նրանք ունեն անհրաժեշտ որակավորում և համապատասխան փորձ ծառայությունների մատուցման համար: Ընտրության չափանիշներն են՝

Խորհրդատուների փորձառությունը վեբ կայքերի պատրաստման գործում- 40 միավոր

Խորհրդատուների հատուկ փորձառությունը նմանատիպ ֆունկցիոնալ նշանակությամբ և ընդհանուր էլեմենտներով կայքերի պատրաստման գործում - 60 միավոր

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկության կամ ենթախորհրդատվական ձևով՝ բարձրացնելու իրենց որակավորումը:

Լրացուցիչ տեղեկատվություն կարելի է ձեռք բերել ստորև նշված հասցեով տեղական ժամանակով ժամը 9:00-18:00.

Հետաքրքրությունների հայտը պետք է հանձնել գրավոր կամ էլեկտրոնային ձևով ստորև նշված հասցեով մինչև **2016թ, օգոստոսի 8-ը,** 17:00 տեղական ժամանակով:

Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ
Տնօրեն՝ Թամարա Բաբայան
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Պռոշյան 1-ին նրբանցք, 32 տուն;
Հեռախոս / Ֆաքս՝ 374 10 – 58 – 80 -11; e-mail: g.zara@r2e2.am
Վեբ կայք՝ www.r2e2.am